



I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման հիմունքները:
2. Դասալսումների կազմակերպման, դրանց արդյունքների քննարկման և գնահատման համար պատասխանատու են Համալսարանի ակադեմիական քաղաքականության և որակի ապահովման բաժինները, ֆակուլտետներն ու ամբիոնները:

II. Դասալսումների կազմակերպման նպատակները

3. Համալսարանում դասալսումների կազմակերպման նպատակներն են.
 - 1) գնահատել դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» հարաբերությունների ձևավորման, դասը վարելու, ժամանակակից մեթոդների կիրառման հմտությունները,
 - 2) գնահատել դասի կազմակերպման և անցկացման գործընթացի որակը, դասավանդման մեթոդների կիրառման, ուսումնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը,
 - 3) կատարված դասալսումների քննարկման և գնահատման արդյունքների հիման վրա մշակել և իրականացնել դասավանդման որակի բարելավմանն ուղղված ծրագրեր, դասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ,
 - 4) ամբիոնների դասախոսների մոտ կատարված դասալսումների քննարկման և գնահատման արդյունքները հաշվի առնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության(ձևավորման) մրցույթների անցկացման, դասախոսների տարակարգերի սահմանման, աշխատանքային պայմանագրերի կնքման, ինչպես նաև խրախուսման կառուցակարգերի կիրառման գործընթացներում:

III. Դասալսումները կազմակերպող աշխատանքային խմբերի ձևավորումը

4. Դասալսում կազմակերպելու նպատակով ձևավորվում է երեք անձից բաղկացած աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի կամ ամբիոնի ներկայացուցիչ,

2) ակադեմիական քաղաքականության բաժնի մասնագետ,

3) որակի ապահովման բաժնի մասնագետ:

5. Աշխատանքային խումբը ձևավորվում է դասալսումը կազմակերպելուց առաջ յուրաքանչյուր դասալսման համար առանձին: Խմբի կազմը փոխվում է ըստ դասալսվող առարկայի:

IV. Դասալսումների կազմակերպման ժամանակացույցը

6. Դասալսումներ կազմակերպվում են ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր դասընթացի գծով առնվազն մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության:

7. Ուսումնական տարվա սկզբին Համալսարանի ակադեմիական քաղաքականության և որակի ապահովման բաժինները ֆակուլտետների դեկանների հետ համատեղ կազմում են այն դասընթացների ցանկը, որոնց դասալսումները պետք է կազմակերպվեն ընթացիկ տարում:

8. Դասալսումներ կազմակերպելու նպատակով դասընթացների ցանկը կազմելիս հաշվի են առնվում ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները:

9. Ցանկում ներառված դասընթացների գծով դասալսումներ կազմակերպելու մասին նախապես իրազեկվում են համապատասխան ամբիոնների վարիչները և պրոֆեսորադասախոսական կազմը: Դասալսումների անցկացման ժամանակացույցը համաձայնեցվում է գործընթացում ներգրավված կողմերի հետ:

V. Դասալսումների արդյունքների ամփոփումը, քննարկումը և գնահատումը

10. Դասալսման արդյունքները ենթակա չեն հանրային ներկայացման կամ հրապարակման:

11. Դասալսումների արդյունքները քննարկվում, ամփոփվում և ներկայացվում են հաշվետվության կամ վերլուծության ձևով՝ դասալսումների գործընթացն ավարտելուց հետո կողմերի հետ համաձայնեցված ձևաչափով:

12. Դասալսման արդյունքները քննարկելիս և ամփոփելիս հաշվի են առնվում դասալսման ժամանակ սույն կարգի Հավելված 1-ում նշված չափանիշները:

Գավառի պետական համալսարան

Դասալսման ձևաթուղթ

Դասալսման նպատակը՝ *դասալսումների և քննարկումների միջոցով նպաստել փորձի փոխանակման, զարգացման և ուսումնական գործունեության արդյունավետության բարձրացմանը:*

Դասալսման ընթացքում պետք է գնահատել դասախոսի մասնագիտական մանկավարժական կոմպետենտությունները՝ նշված մասնագիտական մանկավարժական խնդիրների լուծման ընթացքում:

Գնահատման չափանիշները

1 - բնութագրի արտահայտվածության բավարար աստիճան: Որոշ իրադրություններում մանկավարժի որակներն ու վարքագիծը համապատասխանում են դատողությանը, իսկ որոշ դեպքերում՝ ոչ:

2 - բնութագրի արտահայտվածության լավ աստիճան: Այն հաճախ է դրսևորվում մանկավարժական իրադրություններում: Երբեմն դեպքեր են լինում, երբ դասախոսի որակներն ու վարքագիծը չեն համապատասխանում դատողությանը:

3 - դատողության մեջ նշված բնութագրի արտահայտվածության բարձր աստիճան: *Այն դրսևորվում է իրադրությունների գերակշիռ մեծամասնության դեպքում, կայուն է, լիովին համապատասխանում է դասախոսի տիպական որակներին և վարքագծին:*

Մասնագիտությունը, մասնագիտական կրթական ծրագիրը, կրթական աստիճանը և ուսուցման եղանակը

Կուրսը _____

Ուսանողների թիվը _____

Դասընթացի անվանումը _____

Դասի թեման _____

Դասավանդող դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____

1. Մասնագիտական կոմպետենտություններ

1.1. Դասի սկզբում դասախոսը ուսանողներին ներկայացնում է տվյալ թեմայի ակնկալվող վերջնարդյունքները և նպատակը:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

1.2. Դասի ընթացքում դասախոսն օգտագործում է արդյունավետ մեթոդներ, միջոցներ, տեխնոլոգիաներ և դիդակտիկ նյութեր:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

1.3. Դասախոսը նոր նյութը, հասկացությունները, եզրույթները մատուցում և պարզաբանում է մատչելի եղանակով:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

1.4. Դասախոսը խթանում է ուսանողների ինքնուրույն հետազոտական, տրամաբանական, ստեղծագործական, քննադատական մտածողության, վերլուծության, համադրման, ընդհանրացման, ինքնագնահատման կարողությունների զարգացումը և ճանաչողական հետաքրքրությունները, կարևորում է սովորողների արժեքային կողմնորոշումները:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

2. Մանկավարժական կոմպետենտություններ

2.1. Դասախոսը բոլոր սովորողներին ներգրավում է դասին, կիրառում է համագործակցային ուսուցման տարրեր:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

2.2. Դասախոսը դասաժամն օգտագործում է արդյունավետ և նպատակային:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

2.3. Դասախոսն ապահովում է թեմայի նախապես սահմանված վերջնարդյունքների հասանելիությունը:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

2.4. Դասընթացում ակտիվորեն կիրառվում են ժամանակակից S2S միջոցներ և ծրագրեր

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

2.5. Դասախոսն ուսանողների հետ ապահովում է հետադարձ կապ:

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

3. Հաղորդակցական կոմպետենտություններ

3.1. Տիրապետում է ակադեմիական մատչելի և կիրթ խոսքային մշակույթի

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

3.2. Դասախոսը պահպանում է էթիկայի նորմերը, ակադեմիական բարեվարքության կանոնները

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | |

| | | |
|--|--|--|
| | | |
|--|--|--|

4. Նկատառումներ և առաջարկություններ

33 միավորը համարել առավելագույն

Ընդհանուր միավոր՝

Դասալսողներ՝

- | | |
|--|------------------|
| 1. _____ | _____ |
| /անուն, ազգանուն/գիտական աստիճան, կոչում | /ստորագրություն/ |
| 2. _____ | _____ |
| /անուն, ազգանուն/գիտական աստիճան, կոչում | /ստորագրություն/ |
| 3. _____ | _____ |
| /անուն, ազգանուն/գիտական աստիճան, կոչում | /ստորագրություն/ |

« _____ » _____ 202 թ.